

**«Հրազդանի Էներգետիկ Կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ
2011Թ. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ)**



[Handwritten signature]
Աշոտ Մանուկյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2011 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	<i>Ծան.</i>	<i>2011</i>	<i>2010</i>
Հասույթ	5	18,290,094	11,983,657
Ինքնարժեք	6	(16,991,609)	(10,477,218)
Համախառն եկամուտ		1,298,485	1,506,439
Վարչական ծախսեր	7	(880,037)	(839,479)
Իրացման ծախսեր		(3,275)	(1,310)
Այլ գործառնական եկամուտ	9	10,461	27,748
Այլ գործառնական ծախսեր	9	(100,893)	(1,098,848)
Զուտ ֆինանսական (ծախսեր)/ եկամուտներ	10	75,638	(97,703)
(Վնաս) / շահույթ նախքան շահութահարկով հարկումը		400,379	(503,153)
Շահութահարկի գծով ծախս	11	(150,081)	(157,270)
Տարվա (վնաս)/շահույթ		250,298	(660,423)
Այլ համապարփակ եկամուտ			
Վերագնահատման պահուստ		-	-
Այլ համապարփակ եկամտի տարրերին վերաբերող շահութահարկ		-	-
Տարվա այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո		-	-
Ընդամենը համապարփակ (վնաս) /եկամուտ		250,298	(660,423)

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

	<i>Ծան.</i>	<i>2011</i>	<i>2010</i>	<i>2009</i>
				Վերահաշվարկված
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	12	2,469,795	3,185,363	3,899,315
Ոչ նյութական ակտիվներ		4,456	2,357	2,713
Զուտ հետաձգված հարկային ակտիվներ	11	-	-	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	15	96,029	113,478	185,517
		2,570,280	3,301,198	4,087,545
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	14	223,927	239,730	340,496
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	15	5,811,581	2,663,926	4,238,425
Շահութահարկի գծով կանխավճար		-	-	262,009
Տրամադրված փոխառություններ		-	6,364	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16	2,676,357	1,708,716	2,332,103
		8,711,865	4,618,736	7,173,033
		11,282,145	7,919,934	11,260,578
Ընդամենը ակտիվներ				
Սեփական կապիտալ և պարտավորություններ				
Սեփական կապիտալ				
Բաժնետիրական կապիտալ	17	15,974,300	15,974,300	15,974,300
Վերագնահատման պահուստ		223,209	488,072	766,098
Պարտադիր պահուստ	17	204,432	191,917	191,917
Կուտակված (վնաս)/ շահույթ		(10,946,029)	(11,448,676)	(10,989,352)
Ընդամենը սեփական կապիտալ		5,455,912	5,205,613	5,942,963
Ընթացիկ պարտավորություններ				
Աշխատավարձի, սոցիալական հատկացումների և տուգանքների գծով հավելյալ վճարների պահուստ	19	532,116	532,116	446,917
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	18	5,294,117	2,182,205	4,870,698
Շահութահարկի գծով պարտավորություններ		-	-	-
		5,826,233	2,714,321	5,317,615
Ընդամենը պարտավորություններ				
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		11,282,145	7,919,934	11,260,578

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2011 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	<i>Բաժնետիրական կապիտալ</i>	<i>Վերագնահատման պահուստ</i>	<i>Կուտակված վնաս</i>	<i>Պարտադիր պահուստ</i>	<i>Ընդամենը սեփական կապիտալ</i>
2010թ. հունվարի 1 (վերահաշվարկված)	15,974,300	766,098	(10,989,352)	191,917	5,942,963
Ընդամենը համապարփակ եկամուտ (վերահաշվարկված)	-	-	(660,422)	-	(660,422)
Վերագնահատման պահուստի իրացում	-	(278,026)	278,026	-	-
Շահաբաժիններ	-	-	(76,928)	-	(76,928)
Պարտադիր պահուստի համալրում	-	-	-	-	-
2010թ. դեկտեմբերի 31 (վերահաշվարկված)	15,974,300	488,072	(11,448,676)	191,917	5,205,613
Ընդամենը համապարփակ եկամուտ	-	-	250,299	-	250,299
Վերագնահատման պահուստի իրացում	-	(264,863)	264,863	-	-
Պարտադիր պահուստի համալրում	-	-	(12,515)	12,515	-
Շահաբաժիններ	-	-	-	-	-
2011թ. դեկտեմբերի 31	15,974,300	223,209	(10,946,029)	204,432	5,455,912

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՁԵԿՈՒՅՑ

1) Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը և դրանց ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվելու է թողարկողը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք թողարկողի կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

«Հրազդանի Էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ-ն հիմնադրվել է ՌԴ դաշնային գույքի կառավարման դաշնային գործակալության առ 2004թ. սեպտեմբերի 1-ի N291-ռ կարգադրության համաձայն:

«ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ն ստեղծվել է Հայաստանի կողմից Ռուսաստանի Դաշնությանը պետական պարտքի մարման դիմաց փոխանցված Հրազդանի ջերմային էլեկտրակայանի գույքային համալիրը ընկերության կանոնադրական կապիտալի մեջ ներառելով:

Այսօր ընկերության միակ բաժնետերն է հանդիսանում Ռուսաստանի Դաշնության իրավաբանական անձ «ԻՆՏԵՐ ՌԱՕ ԵԷՍ» ԲԲԸ (հասցեն՝ ՌԴ, ք. Մոսկվա, Կրասնոպրեսնենսկայա նաբերեժնայա 12 շքամուտք 7): Ընկերության բաժնետերերի ռեեստրը վարում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ն:

Ընկերությունը գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Հրազդանի տարածքային բաժնի կողմից 24.09.2004 թ., գրանցման համարն է 33.130.01678, վկայականի համարը՝ 03 Ա 063867:

Ընկերության գործունեության հիմնական ուղղությունը էլեկտրական էներգիայի և ջերմային էներգիայի արտադրությունն ու վաճառքն է, որն էլ հանդիսանում է շահույթի ստացման միակ աղբյուրը: Վառելիքի միակ մատակարարը «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն է, իսկ արտադրանքի միակ սպառողը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն: Այս երկու գործընկերների ընտրության որոշման վրա կառավարման մարմինները որևէ ազդեցություն չունեն, քանի որ դրանք հանդիսանում են բնական մենաշնորհ:

Ընկերությունը 2007թ.-ի սկզբից ջերմային էներգիայի արտադրությամբ չի զբաղվում:

Վաճառքի սակագները սահմանվում են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից: Այն 01.04.2011թ. – 31.03.2012թ. համար կազմում է 52.80 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) 1 կՎտ/ժ էլեկտրաէներգիայի համար: Նախկինում այն կազմում էր 46.62 դրամ: Ընկերության արտադրանքի գնի բարձրացումը սովորաբար կապված է լինում ինքնարժեքի բարձրացմամբ, ինչն էլ իր հերթին կապված է գազի գնի բարձրացումով:

Վերը նշված 52.8 դրամ սակագինը 1 կՎտ/ժ էլեկտրաէներգիայի համար հանդիսանում է միադրույք սակագին, մինչդեռ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից Ընկերության համար երկրորդ սակագնային համակարգում սահմանվել է՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 28.879 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 1096.64 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

Ընկերության արտադրանքի ծավալի փոփոխությունները կապված է լինում Ընկերության միակ սպառողի մոտ ունեցած պահանջարկով:

Ընկերությունը 2011թ. մարտ ամսից մինչև սեպտեմբեր չի աշխատել: Սեպտեմբերի 8-ից մինչ օրս աշխատում է: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Ընկերությունը հիմնականում աշխատում է այն ժամանակ, երբ Հայաստանի ատոմակայանը չի աշխատում:

Նշված փոփոխություններն Ընկերությունը համարում է ոչ էական, բնականոն գործընթաց, և կարծում է, որ ողջամիտ ներդրողը չի կարևորի ներդրումային որոշումներ կայացնելիս:

Ընկերությունն ունի հզորություն, որի համար «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն իրեն վճարում է գումար:

2011 թ. ընթացքում էլեկտրաէներգիայի արտադրության, առաքման, էլ. հզորության, սպառված գազի ծախսի չափերի և գների մասին ամփոփ տվյալներ ըստ ամիսների բերված են թիվ 1 աղյուսակում:

Էլեկտրաէներգիայի օգտակար առաքում, էլ. հզորություն և գազի ծախս 2011թ.

2011 թ.	Էլ. Էներգիայի արտադրություն (կՎտ.ժ)	Էլ. էներգիայի առաքում			Հզորություն			ԸՆԴԱՄԵՆԸ (=5+8)	Գազի ծախս			Գնվող էլեկտրաէներգիա	
		Էլ. էներգիայի առաքում (կՎտ.ժ)	Արժեքը (1 կՎտ.ժ համար, առանց ԱԱՀ)	Գումար (առանց ԱԱՀ, դրամ)	Էլ. հզորություն (կՎտ)	Արժեքը (1 կՎտ համար)	Գումար (առանց ԱԱՀ, դրամ)		մ ³	Արժեքը (1000 մ ³) ներառյալ ԱԱՀ	դրամ (առանց ԱԱՀ)	դրամ (առանց ԱԱՀ)	(կՎտ.ժ)
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
I	61,497,830	56,840,520	27.162	1,543,902,204	400,000.0	427.25	170,900,000	1,714,802,204	19,615,867	243,13 USD	1,495,713,545	18,728,340	1,146,233
II	96,687,688	90,039,576	27.162	2,445,654,963	400,000.0	427.25	170,900,000	2,616,554,963	29,449,289	243,13 USD	2,272,283,540	19,811,801	1,206,439
III	51,318,975	47,475,403	27.162	1,289,526,896	400,000.0	427.25	170,900,000	1,460,426,896	15,690,231	243,13 USD	1,199,470,082	16,707,067	1,020,226
IV	11,647,646	10,750,477	24.066	258,720,979	320,000.0	913.87	292,438,400	551,159,379	3,469,876	243,13 USD	277,061,239	11,218,926	683,177
V	0	0	24.066	0	400,000.0	913.87	365,548,000	365,548,000	0.0	243,13 USD	0	9,770,870	594,242
VI	0	0	24.066	0	320,000.0	913.87	292,438,400	292,438,400	0.0	243,13 USD	0	9,671,748	588,340
VII	0	0	24.066	0	400,000.0	913.87	365,548,000	365,548,000	0.0	243,13 USD	0	7,635,583	469,692
VIII	0	0	24.066	0	400,000	913.87	365,548,000	365,548,000	0.0	243,13 USD	0	8,575,964	526,286
IX	74,894,601	69,755,664	24.066	1,678,739,810	366,670	913.87	335,088,713	2,013,828,523	22,244,830	243,13 USD	1,696,332,677	11,149,775	681,731
X	115,824,417	108,180,864	24.066	2,603,480,673	367,740	913.87	336,066,554	2,939,547,227	32,389,323	243,13 USD	2,536,766,947	12,863,809	782,348
XI	51,950,334	48,526,896	24.066	1,167,848,279	400,000	913.87	365,548,000	1,533,396,279	14,964,427	243,13 USD	1,192,852,211	14,336,276	888,374
XII	164,291,437	153,279,192	24.066	3,688,817,035	400,000	913.87	365,548,000	4,054,365,035	46,202,452	243,13 USD	3,795,072,333	15,249,527	959,718
Ընդամենը	628,112,928.0	584,848,592.0		14,676,690,840.0	4,574,410		3,596,472,066.7	18,273,162,906.676	184,026,295.000		14,465,552,573.770	155,719,685.0	9,546,806.0

Առաքված էլեկտրաէներգիայի ծավալը բերված է թիվ 1 գծապատկերում:

Գծապատկեր 1



2011թ. դեկտեմբերի 23-ին «Հրազդանի Էներգետիկ Կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ տնօրենների խորհրդի կողմից ընդունվել է թիվ 9/11-ՀՄ որոշումը: Այդ որոշմամբ Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ է ընտրվել Միսյոյշին Վաղիմ Սերգեյեվիչը:

Ընկերության կանոնադրական կապիտալը ներկայումս կազմում է 15,974,300,000 (տասնհինգ միլիարդ ինը հարյուր յոթանասունչորս միլիոն երեք հարյուր հազար) դրամ, որը բաղկացած է 1,597,430 (մեկ միլիոն հինգ հարյուր իննսունյոթ հազար չորս հարյուր երեսուն) հատ հասարակ (սովորական) անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսից: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 10,000 (տասը հազար) դրամ:

Ընկերության գործունեությունը կապված է որոշակի ռիսկային գործոնների հետ: Ստորև բերված են Ընկերությանն առընչվող կարևորագույն ռիսկերը, որոնց քանակն այսքանով չի սահմանափակվում:

«ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի հիմնական միջոցների կազմի մեջ չմտած, դեռևս չկառուցված 5-րդ էներգաբլոկի օգտագործման անհնարինությունը. Ներկա դրությամբ ՕԿԿ-ի (Հելլերի հովարան) ռեսուրսի սպառման պատճառով ամառվա ընթացքում պայմանական վառելիքի տեսակարար ծախսի կտրուկ բարձրացման պայմաններում առկա են էներգաբլոկների հզորությունների զգալի սահմանափակումներ (յուրաքանչյուր բլոկի վրա մինչև 110 ՄՎտ):

Այդ պատճառով էլեկտրակայանը ներկա դրությամբ լրացուցիչ օգտագործում է համեմատաբար վերջերս կառուցված հովարանը, ինչպես նաև կառուցվող 5-րդ էներգաբլոկի մի քանի այլ կառույցները և ինֆրակառուցվածքի մասերը:

5-րդ էներգաբլոկի կառուցման ավարտից և թողարկումից հետո «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ն կընդհարվի վերոնշյալ հովարանի օգտագործման անհնարինության խնդրի հետ, որը կբերի կայանի էներգաբլոկների տնօրինվող հզորությունների կրճատմանը:

Միջնաժամկետ հեռանկարում տվյալ հարցի արմատական լուծման համար անհրաժեշտ է իրականացնել ՕԿԿ-ի (Հելլերի հովարանի, հունգարական արտադրության) նորոգումը և արդիականացումը:

Ծխնելույզի բարոյական և ֆիզիկական մաշվածությունը. «Պրոմէկսպերտիզա» ՏԿ ՍՊԸ-ի (ք. Ստարիյ Օսկոյ) կողմից ծխնելույզի ներքին զննության կատարումը բացահայտեց 180մ նիշում թուջե թասակների տեղադրման և ներպատման նորոգման անհրաժեշտությունը:

Ֆորս-մաժորային հանգամանքների ծագման ռիսկի պահպանվելը, կապված բնական գազի Հայաստան մղման լրիվ ընդհատման հետ. Բնական գազի մղումը էլեկտրակայան իրականացվում է Վրաստանի տարածքով անցնող Մոզդոկ(Ռ-Ղ)-Հայաստան մագիստրալային գազամուղից: 2005-2007թթ. գրանցվել են տվյալ խողովակների շարքից դուրս գալու դեպքեր՝ գուգորդված էլեկտրակայանի գազամատակարարման դադարեցմամբ:

Անհրաժեշտ է նշել, որ Աբովյանի բնական գազի պահեստարանը (Հայաստանում միակը) տեղավորում է առավելագույնը 80-90 մլն. խմ գազ, իսկ չնվազող մնացորդը կազմում է մոտավորապես 10-15 մլն. խմ: «ՀրազԶԷԿ» ԲԲԸ-ի կողմից 43 մլն. 547 հազար խմ ծավալով գազի պահեստավորումը մեր կարծիքով հնարավոր չէ, քանի որ մայրուղային գազատարի վրա պատահած վթարային իրավիճակների դեպքում Հայաստանի կառավարությունը այդ պահեստարանում գտնվող բնական գազի ամբողջ պահուստը կբաշխի ռազմավարական անհրաժեշտությանը համաձայն:

Միևնույն ժամանակ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը «ՀրազԶԷԿ» ԲԲԸ-ի համար սակագինը հաստատելիս այդ ծախսերը չի ներառում որպես սակագնի հաշվառման բաղադրիչ, ինչը թույլ չի տալիս «ՀրազԶԷԿ» ԲԲԸ-ին ծախսել միջոցներ պահուստը ձևավորելու համար:

Բնական գազի մատակարարումը դադարեցնելու դեպքում հիմնական վտանգը հանդիսանում է սարքավորման փչանալու հնարավորությունը՝ ձմռանը սեփական կարիքների համար ջերմային էներգիայի արտադրության դադարեցման կապակցությամբ: 2008թ-ին ընկերության ուժերով կատարված է ոչ բոլորային մասի կաթսայի ձևափոխություն, ինչն ապահովում է միայն ջերմային էներգիայի արտադրությունը բնական գազի նվազագույն ծախսերով ֆորս-մաժորային իրավիճակում: Նաև ձեռք է բերվել պայմանավորվածություն ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի հետ ֆորս-մաժորային իրավիճակի առաջացման ժամանակահատվածում գազի պահեստարաններից նվազագույն ծավալի գազով կայանը մատակարարելու վերաբերյալ:

Էլեկտրաէներգիայի առաքման լրիվ բացակայությունը հարևան երկրներ. Կայանի հուսալի և տնտեսապես շահավետ աշխատանքի կարևոր բաղադրիչ է հանդիսանում էլեկտրաէներգիայի շուրջամյա արտահանումը հարևան երկրների (Վրաստան, Թուրքիա, Իրան, հեռանկարում՝ Իրաք, Ադվանստան) բարձր պահանջարկ ունեցող շուկաներ:

Թուրքիայի և Հայաստանի միջև քաղաքական հարցերի կարգավորման դեպքում «ՀրազԶԷԿ» ԲԲԸ-ն կարող է կազմակերպել էլեկտրաէներգիայի շուրջամյա առաքում Թուրքիա մինչև 200 ՄՎտ հզորությամբ համեմատաբար հարթ օրական ժամանակացույցով՝ խուսափելով ցերեկային գազաթնային բեռնավորումներից և գիշերային խորը բեռնաթափումներից:

Հայաստանում մակրոէկոնոմիկ իրավիճակի փոփոխությունը (փոխարժեքի հնարավոր աճը). Ընկերության գործունեության հիմնական վտանգներից մեկը 2010թ-ին հանդիսացել է մակրոէկոնոմիկ իրավիճակի փոփոխությունը, մասնավորապես ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճը հայկական դրամի նկատմամբ: ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճը բերում է բնական գազի վրա ծախսերի զգալի մեծացման (քանի որ բնական գազի սակագինը սահմանվում է ԱՄՆ դոլարով), հաշվեկշռային շահույթի նվազմանը և, համապատասխանաբար, ընկերության նախատեսվող եկամուտների նվազմանը:

Ընկերությունը կձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցառումները, որպեսզի նվազեցնի ստորև նշված ռիսկային գործոնների բացասական ազդեցությունը: Այնուամենայնիվ, քանի որ շատ դեպքերում նշված ռիսկային գործոնները Ընկերության հսկողությունից դուրս են, ապա այս ցուցակով չսահմանափակվող ռիսկերի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը չի երաշխավորվում Ընկերության կողմից:

Նշված գործոններն իրենց անորոշությամբ էապես կազդեն նաև հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի վրա:

Ընկերության ամփոփ ֆինանսական ցուցանիշները և գործակիցները բերված են թիվ 2 և թիվ 3 աղյուսակներում:

Աղյուսակ 2

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2011թ. 4-րդ եռամսյակ

Ցուցանիշ	Հազ. դրամ
Արտադրանքի իրացումից հասույթ	8,533,375
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-8,126,161
Վարչական ծախսեր	-240,521
Իրացման ծախսեր	-8
Այլ գործառնական եկամուտ	3,593
Այլ գործառնական ծախսեր	-40,211
2011թ. 4-րդ եռամսյակի շահույթ	162,338
Շահութահարկի գծով ծախս	-71,466
2011թ. 4-րդ եռամսյակի զուտ շահույթ	90,872
Դեբիտորական պարտք	5,907,610
Կրեդիտորական պարտք	5,826,233

Աղյուսակ 3

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 01.01.2011-31.12.2011թթ.

Ցուցանիշի անվանումը	01.01.2012 թ.
Չուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	156.69
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	4.59%
Ակտիվների շահութաբերություն (ROA)	2.22%
Չուտ շահույթի մարժա (NPM)	1.37%
Կապիտալի համարժեքության գործակից	0.48
Ֆինանսական կախվածության գործակից	1.07
Բացարձակ իրացվելության գործակից	0.46
Ընթացիկ իրացվելության գործակից	1.46
Ընդհանուր իրացվելության գործակից	1.50
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	190.46
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	1.92
Պաշարների շրջանառելիության գործակից	75.88
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	4.81
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	3.21
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	113.72

Ընկերության աշխատավարձի ֆոնդը հաշվետու եռամսյակում կազմում է՝ 137,085.0 հազ. դրամ (հոկտեմբեր), 129,077.0 հազ. դրամ (նոյեմբեր), 138,560.0 հազ. դրամ (դեկտեմբեր), աշխատողների թվաքանակը կազմում է 665 հոգի է առ 31.12.2011թ. դրությամբ:

2) Թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

Զարգացման նոր ծրագրերի և հեռանկարների վերաբերյալ կանխատեսումներ չեն արվել:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ պատասխանատու անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Միսյուշին Սերգեյեվիչ	Տնօրենների խորհրդի նախագահ	Տնօրենների խորհրդի աշխատանքների կազմակերպման համար
Վալերիյ Նազարով	Տնօրենների խորհրդի անդամ	-
Իվան Պողոսյան	Տնօրենների խորհրդի անդամ	-
Անդրեյ Գուրվյով	Տնօրենների խորհրդի անդամ	-
Գմիտրիյ Կուզնեցով	Տնօրենների խորհրդի անդամ	-
Արզամով Պետրովիչ	Տնօրենների խորհրդի անդամ	-
Ալեքսանդր Պախոմով	Տնօրենների խորհրդի անդամ	-
Աշոտ Մանուկյան	Գլխավոր տնօրեն	Ընթացիկ գործունեության համար
Աշոտ Ավետիսյան	Գլխավոր հաշվապահ	Հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար

